



Art Décoratif • Սալոնին հրախրատումը (1)

## Էտկար ՇԱՀԻՆ

~~~~~

(Տար. և վեր)



Րագ յաջողութիւնը, օրէ օր աւելի  
կատարելագործուած արենասին շա-  
հեկանութիւնը, Պ. Շահինը փորագութեան  
ճամբան մէջ պահեցին : Արդէն, 1899ին, Պ.  
Քեման ժանին արուեստագէտին առաջին քա-  
նուանդ փանչները կը ցուցակագրէր, և. 1900ին,  
Պ. Բոնէ Մարքս հանրային ուշագրութիւնը կը  
հրափրէ այց արդէն իսկ Կարենոր գործին վր-  
րայ՝ Կազկը ըլ Պօ-գ-Արք մէջ Այսօր Պ. Շահինի  
յօրինած փանչներու թիւը 200ի կը համար :

Վենետիկի վերջին՝ Միջազգային Ցուցահան-  
ունիքսին (1903), ևս անձասպէս պարտք համարե-  
ցայ առաջարկել որ Պ. Շահինին յատկացուի  
անդուգական գործերու վերապահուած միծ  
ոսկի մետալներէն մին. Պ. Շահին ամստեղ ու-  
ղարկած էր քանի չափ օ-ֆորներ, որոնց մէջ  
կը գտնուէին միծ մասն այս փլանչներուն որոնց  
վերարտադրութիւնը մեր այս թիւով կը հրա-  
տարակենք իր գործը այսօր ամբողջ Եւրոպայի  
մէջ ծանօթ է ևս նուիրագործուած, ևս մինչ

(1) Շահինի գործերու այս վերաբարու-  
թեանց իշխեները ազնուարաւ մեզի փոխ օր-  
ւած են Art Décoratif բերքի մատենին կանչ :

ուրիշ բան չունինք ընկելու բայց եթէ սպասել  
անոր ճոխ ու անզագրում ընդլայնումը :

Քանի մը բանիմաց հրատարակիչներ ըմբռու-  
նած են վերջներս թէ ո՞քան այդ տազանդը՝  
խորաթափանց, Նկարչական ու երգիծական  
դիտողութիւնով կազմուած պիտի յաջողէր  
պատմուածք մը կինդանացնելու : Ենին այժմ  
Կայխատի պատկերազնելու երեք գիրք, շատ  
տարրեր նկարագրով, որոնք օ-գործներու շա-  
հեկան շարքեր պիտի ձեւացնեն. Անաթոյ Ֆրանսի  
Histoire Comiqueը, զոր պիտի հրատարակէ  
Քալման-Լէվի : Փարիզան տօնավաճառի տր-  
պարներ, որուն բնակիր գրած է Պ. Կապրիէլ  
Մուրէ, եւ որ Հարիւր Գրասէրներու Ընկերու-  
թեան յատկացուած է. ևս Պ. Օթավլ Միքայէլի  
մէկ նորագիւրը, Նախասնեալին մէջ (Հրատա-  
րակիչ՝ Ռումանեու) :

Histoire Comiqueը Պ. Շահինին ներշնչած  
է որուն նկարագրիներ եւ բարբի պատկերներ,  
գերասաններու այդ միջազգային մէջ ուր ար-  
հեսաբին ունակութիւնները եւ հասարակութեան  
մասնութիւնը իրենց ամրող կեանքին մէջ  
կը վերերեւան : Այստեղ կը տեսնուի կինդա-  
նագիր մը ծեր գերասանունիքի որ ասենով աղ-  
ւոր է եղած, անողորմ սրատեսութեամբ մը  
գծուած . յետոյ՝ քապոթէնը, որ իր բոլոր տա-  
զանդը իր գէմքնին փառաւոր ծիծաղեկիութեան  
մէջ կը կայսրնէ. եւ գերասանի թաղուամբ, ուր  
գերասանուանիները ինքզինքնին ցուցընելու սո-  
վորութիւննին չեն մոռնար :

Տօնավաճառի տիպարներուն պատկերազն-  
եան մէջ, զայտումն ու յօրինուածքը շատ  
տարրեր են . Ժողովրդական հասարակութիւն-



Կենդանացիր Անաբոլ Ֆրանսի

և մեր հրապարակներու աճպարարները չտփազանց ճիշդ եւ գուռաբալի ուրուադիմներու նիւթ են տուած: Խոկ նախասենեալին մէջը բուլորովին տարբեր աշխարհ մըն է, տարօրինակ ու կասկածելի, որուն մէջ իւրաքանչիւր գէմք բարոյական անձնաւորութիւն մը կը համազրէ:

Պ. Շահին գրքերու պատկերազարդումը կ'ըմբռնէ իրերու ճշմարիտ անձնական բաժին մը զոր կը բերէ արուեստագէտը, առանց ջանալու գրագէտին հետ մրցիլ, ոչ ալ պատմուածքին այսինչ ֆրազը տառականորդէն թարգմանել, Գրագէտ ու գծագրիչ տարբեր յատկութիւններ ունին, գծագրութիւնը կարող է ճշդել կենդանագիրները կամ տեսարաններու տեղագրական նկարագիրը: Հեղինակը կը պատմէ, արուեստագէտը ցոյց կուտայ եւ կարող է երեւան հանել յատկանշական այսինչ գիծը կամ այնինչ շարժումը:

Այսպես ինչպէս իր բոլոր գործերուն մէջ,

Պ. Շահին կը յայտնուի այլազան, սուր եւ կենդանի: Ոչ միայն մթնողորսի տարբերութիւններ կան զոր պէտք է արտայայտել, այլ կարելի է բախ՝ մարդկութեան զանազան եղանակներ, մարմինի տարբեր յօրինուածներ: Պ. Շահին հրաշալի կերպով կ'ըմբռնէ թարմութեան ու ծանրութեան երեւոյթները, կեանքը իրեն միշտ արժանի կ'երեւայ ուսումնասիրուելու, քանի որ իր բոլոր արտայայտութեանց մէջ ան միշտ ինչ իրեն հաւասար է: Թերեւս օր մը այս արուեստագէտը, որ իր ճերմակ ու սեւերով այնքան գունամոխ եւ հզօր է արգէն, վրձինը նորէն ճեռք պիտի առնէ՝ գարձեալ կեանք նկարելու համար, գիտեմ որ այժմ ատոր կը մտածէ:

ԿԻՒՍԹԱԿ ՍՈՒԼԻՒ





Digitized by  
A.R.A.R. @